Մրցույթի հայտարարություն

Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի Ավ.Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010թ-ի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգի 6-րդ կետի համաձայն ՝ Արագածոտնի մարզի << Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,

2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը ,

3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,

5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. հոկտեմբերի 22 –ից մինչև նոյեմբերի 11 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից,

«Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ում:
Մրցույթը տեղի կունենա 2021թ. Նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոց>> ՊՈԱԿ -ում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ , Շիրակացու 14 :

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 055414232, 098301932, էլ.փոստ՝ tsakhkahovit@schools.am: